

**ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԿՈՆԴԱԿԸ ՆԵՐՍԵՍ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ
«Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ
ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՅ
ԱՌ ՍԻՐԵՅԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ԶԱԲԱԿՆ
ՄԱՅՐ ԱԹՈՈՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱԾՆԻ
ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ՆԵՐՍԵՍ ՎԱՐԴԱՆԵԱՆ,
ՈՐ Ի ՍԱՆ ՓԱՌԻՕ, ԲՐԱԶԻԼԻԱ**

Համազգային մեր հոգետր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնությունն ու բարեմաղթանքներն ենք յղում Ձեզ՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու արժանաւոր զաւակիդ:

Բրազիլիայի հայոց թեմ կապարած Հայրապետական Մեր այցելութեան ընթացքին ուրախ առիթն ունեցանք ճանաչել Ձեզ եւ Ձեր ընտանիքին, ինչպէս նաեւ բարի վկայութիւններ լսել հաւաքաւոր հայորդոյդ եկեղեցանպաստ արգասաւոր գործունէութեան մասին: Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին առաւել շէն ու պայծառ փեսնելու նախանձախնդրութիւնը եւ զոհողութեան ու նուիրաբերումի ոգին արժանիօրէն սէր ու յարգանք են բերել Ձեզ: Բրազիլիայի հայոց թեմում, որին ականաւարես եղանք նաեւ Մենք:

Հայրապետիս համար գոհունակութիւն է գնահատանքի Մեր խօսքը ուղղելու Ձեզ՝ նաեւ հանդէպ համայն մեր ժողովրդի հոգետր սրբազան կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը դրսեւորած Ձեր ջերմ զգացումների ու որդիական սիրոյ համար: Ազնիւ նուիրապտութիւններով Դուք Ձեր աջակցութիւնն էք բերել Աստուածակառոյց Մայր Աթոռիս շինութեանն ու պայծառութեանը, եւ այսօր Ձեր անունը արժանիօրէն գերելոյում է Վեհարանի մարմարեայ փախարակին արձանագրումը մեր Եկեղեցու պարուարժան բարերարների անուանաշարքում՝ վկայելով հաւաքաւոր ու եկեղեցասէր Ձեր ոգին եւ յաւերժացնելով Ձեր անունը՝ որպէս Սուրբ Էջմիածնի բարերար: Երջանկայիշարակ Գարեգին Ա Ամենայն Հայոց Հայրապետի բարի ցանկութիւնն էր հաւաքաւոր հայորդոյդ կուրծքը զարդարել «Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ» շքանշանով՝ որպէս գնահատանք մեր Եկեղեցուն ու ժողովրդին մատուցած Ձեր ծառայութիւնների, սակայն անկարար մնաց իր հիւանդութեան եւ անժամանակ վախճանումի պարճառով:

Մեծարգոյ պրն Վարդանեան, ընդառաջելով Գերաշնորհ Տ. Տաթև արքեպիսկոպոս Դարիբեանի խնդրանքին եւ բարձր գնահատելով Ձեր մատուցած ծառայութիւնները մեր Եկեղեցուն ու հաւաքաւոր ժողովրդին, Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք

Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

Ս Ո Ւ Ր Բ Գ Ր Ի Գ Ո Ր Լ Ո Ւ Ս Ա Ւ Ո Ր Ի Չ

պապոտոյ բարձրագոյն շքանշանը:

Ի խորոց սրտի աղօթքով Բարձրեալն Աստուծոյ օրհնութիւնն ու օգնականութիւնն ենք հայցում Ձեզ եւ մաղթում, որ Տէրը հաւաքոյ մեր հայր Սուրբ Գրիգոր Լուսաւորչի բարեխօսութեամբ պարգեւի Ձեզ եւ Ձեր ընտանեաց անդամներին քաջառողջութիւն, երջանիկ կեանքի երկար օրեր եւ եկեղեցաշէն գործերի յաջողութիւններ:

Ողջ լսրոսք ի Տէր, զօրացնալ շնորհօք Սուրբ Նոգոյն եւ յաւեր օրհնեալ ի Մէնջ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՅ

Տուաւ Կոնդակս ի 10-ն Օգոստոսի
յամի Տեառն 2004 եւ ի թուին հայոց ՌՆԾԳ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 251